ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Գարիկ Պետրոսյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Վաշինգտոն, 2024 թվականի հունվարի 8-ից հուլիսի 5 -ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝
Մասնակցել Համաշխարհային բանկի կողմից կազմակերպվող պետական պաշտոնյաների կարողությունների զարգացմանն ուղղված պրակտիկայի 19-րդ ծրագրին:

5. Քննարկված թեմաները՝

- Համաշխարհային բանկի աշխատանքային կանոնակարգը, կառուցվածքը, հիմնական նպատակները և դրանց իրագործմանն ուղղված ծրագրերը,
- Համաշխարհային բանկում Հայաստանն ընդգրկող ընկերակցային խմբի գրասենյակին աշխատանքներին ծանոթացում,
- Պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության գնահատման առկա մեթոդաբանությունների ուսումնասիրություն և դրանց պրակտիկ կիրառում,
- Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատման մեթոդաբանությանը ծանոթացում, դրա միջոցով իրականացված գնահատումների ուսումնասիրություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Գործուղման ընթացքը Համաշխարհային բանկում (այսուհետ՝ Բանկ) ունեցել է երեք հիմնական փուլ: Առաջինը փուլի ժամանակ՝ Բանկի՝ Հայաստանն ընդգրկող ընկերակցային խմբի գրասենյակում, ունեցել եմ մի շարք հանդիպումներ Բանկի գործադիր տնօրենի, նրա խորհրդատուների հետ, ինչպես նաև մասնակցել են տնօրենների խորհրդի մի շարք նիստերի, որտեղ քննարկվել են կարևոր հարցեր և նախագծեր, ինչպես Բանկի գործունեությանը և զարգացմանը առնչվող, այնպես էլ տարածաշրջանային, այդ թվում Հայաստանի հետ կապված:

Գործուղման երկրորդ մասը անցկացրել եմ Բանկի «Հանրային ֆինանսներ և գնումներ» վարչությունում, որտեղ ծանոթացել եմ պետական ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատման հիմնական մեթոդաբանությունների պրակտիկ կիրառությանը, ինչպես նաև ուսումնասիրել եմ մի շարք երկրների պետական ֆինանսների

կառավարման համակարգերը, առկա խնդիրները և առավելությունները: Այս ընթացքում ներգրավված եմ եղել նաև որոշ հետազոտական աշխատանքներում, որոնցից առավել նշանակալին վերաբերում էր հանրային ներդրումների կառավարման համակարգերի և դրանց զարգացման ուսումնասիրությանը:

Գործուղման ընթացքում, աշխատանքային փորձ եմ ձեռք բերել նաև Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության քարտուղարությունում (PEFA Secretariat) որտեղ առավել հանգամանալից ծանոթացել եմ PEFA մեթոդաբանության կիրառմանը, իրականացրել եմ տարբեր երկրների գնահատումների ստուգում: Այս ընթացքում իրականացրել եմ նաև վերլուծական աշխատանքներ՝ հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության և տնտեսական զարգացման միջև կապերի ուսումնասիրության ուղղությամբ:

Գործուղման ընթացքում, որպես Բանկի առաքելության թիմի ներկայացուցիչ այցելել եմ Քուվեյթ, որտեղ մասնակցել եմ արաբական երկրների պետական պաշտոնյաների համար կազմակերպված հանրային ֆինանսների կառավարման ոլորտի սեմինարին՝ այլ թեմաների հետ մեկտեղ ներկայացնելով նաև ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատման փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Առկա չեն»

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաշխարհային բանկում ունեցած փորձի հիման վրա առկա են մի շարք առաջարկություններ և նոր մտքեր ՀՀ ՖՆ-ում աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման և նոր մոտեցումների կիրառման տեսանկյունից: Վերջիններս ներքին քննարկումների արդյունքում կմշակվեն և կներդրվեն ամենօրյա աշխատանքներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գարիկ Պետրոսյան՝ **17 հուլիս, 2024թ**